ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՍՏԱՑՆՈՂ ԿԱՐԵՒՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայագիտությունը հարստացնող կարևոր աշխատությունների թիվն ավելացավ եւս մեկով: Ընթերցողի գրասեղանին է երիտասարդ խոստումնալից պատմաբան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պամագիտության դոկտոր Գեւորգ Ստեփանյանի «Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին» (Երեւան, 2011) աշխատությունը, որը պատմության ինստիտուտում գործող «Մեսրոպ արք. Աշճեան» մատենաշարի 57-րդ պրակն է:

Ինչպես գրում է ակադ. Վ. Բարխուդարյանը. «օգտագործված սկզբնաղբյուրների համապարփակ քննությունը եւ նրանց վրա հիմնվող եզրակացությունների հավաստիությունը թույլ են տվել հեղինակին Բաքվի նահանգի հայության XIX դարի երկրորդ կեսի պատմությունը ներկայացնել հայոց պատմության լայն հետնախորքի վրա, այն դիտարկելով ոչ թե որպես գաղթաշխարհի, այլ՝ պատմաժողովրդագրական առումներով Արեւելյան Հայաստանի հետ անխզելի միասնության մեջ գտնվող Կուրի ձախափնյակի հնաբնակ հայության միասնական պատմության անբաժանելի մաս»:

Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, հինգ ենթագլխից, վերջաբանից (հայերեն եւ ռուսերեն), յոթ հավելվածից, օգտագործված սկզբնաղբյուրների, գրականության եւ համառոտագրությունների ցանկերից (անձնանուններ, տեղանուններ), ընդհանուր առմամբ՝ 246 էջ:

Առաջաբանում հեղինակը նշում է, որ Բաքվի նահանգի հայության պատմությունը դարեր շարունակ գոյատեւած մի մեծ ու ինքնատիպ հայաշխարհի ժողովրդագրության, ընկերային-տնտեսական, հասարակական-քաղաքական եւ հոգեւոր-մշակութային կյանքի բազմազան հիմնահարցերի հանրագումարն է:

Սույն աշխատությունն իր ամբողջության մեջ հիմնավորապես փաստարկում է, որ Արեւելյան Այսրկովկասում՝ Կուրից մինչեւ Ապշերոնյան թերակղզի ընկած տարածքում հայերը բնակվել են վաղնջական ժամանակներից: ԺԹ. դարի կեսերին հայությունն իր ստվարաթիվ զանգվածներով ներկա էր երկրամասի նախալեռնային եւ լեռնային շրջանների ավելի քան 100 բնակավայրերում՝ սկսած Շամախիից մինչեւ հյուսիս-արեւմուտքում գտնվող Զաքաթալա քաղաքը: Որպես տարածաշրջանի հնաբնակ եւ մշակութակերտ ժողովուրդ՝ հայերը մասնակցել են այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, ընկերային-մշակութային եւ կրթական կյանքին, ստեղծել հարուստ, նշանակալից պատմություն:

Առաջին գլխում («Արեւելյան Այսրկովկասի հայությունը հնագույն ժամանակներից մինչեւ Բաքվի նահանգի կազմավորումը») ուշագրավ դիտարկումներով, փաստառատ նյութերով տրված է հայության ներկայությունը տարածաշրջանում: Մեջբերված պատմական բազմաթիվ ու բազմազան հիշատակությունները աներկբա վկայում են, որ Կուր գետով Մեծ Հայքին սահմանակից բուն Աղվանքի տարածքում, հնագույն ժամանակներից, բնակություն է հաստատել հայկական էթնիկական տարր՝ էական մասնակցություն ունենալով երկրամասի քաղաքական, տնտեսական եւ մշակութային զարգացումներին:

Հեղինակը մեծավաստակ Հր. Աճառյանի բառերով շեշտադրում է, որ «Աղուանից երկրին մէջ կը գտնուէին հայկական ծագում ունեցող ցեղեր, ուրիշ խօսքով՝ հայ գաղթականական մեծ ճիւղեր: Ասոնք այնպէս ուժեղ էին եւ այնպէս հաստատուն կերպով տեղաւորուած երկրին մէջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրոյնութիւնը կորցրած չէին, այլեւ ընդհակառակը, զանազան հաջող հանգամանքներու պատճառաւ... ազդեր էին երկրի վրայ...» (էջ 20):

Աշխատության էջերում փուլ առ փուլ գծագրվում է հայ բնակչության ազգագրական ընդհանուր տեղաշարժը, նրա քաղաքական եւ մշակութային գործունեության համապատկերը, որից պարզ է դառնում հետեւյալը: Կուրի ձախափնյակի էթնոմշակութային պատկերում դեռեւս պարսիկների, ապա արաբական նվաճումների շրջանում՝ Է.-Ը. դարերում սկսված մշակութային, քաղաքական եւ էթնիկական փոփոխություններն ավելի մեծ եւ ավերիչ բնույթ ստացան թյուրքալեզու քոչվոր ցեղերի ասպատակությունների ժամանակաշրջանում:

Հանրագումարելով այս ամենը՝ հեղինակը հակիրճ բնորոշում է, որ նստակյաց հողագործությունը շատ վայրերում տեղի տվեց քոչվորների անասնապահական տնտեսությանը: Դա անվերականգնելի հարված էր երկրամասի քաղաքակրթական արժեքներին: Այս առումով միանգամայն տեղին է մեծանուն պատմաբան Լեոյի այն վկայակոչումը, որ «Թյուրքերի համար Արեւելյան Այսրկովկասի տափաստանները հայրենիք դարձել էին ԺԱ.-ԺԳ. դարերից ոչ վաղ, երբ տեղի ունեին սելջուկյան եւ թաթարական արշավանքները, որոնք լինելով վաչկատուն ժողովուրդների տեղափոխություններ, նստեցրին այստեղ հոծ բազմություններ իրանցից իբրեւ այնպիսի աշխարհագրական միջավայրում, որ կարծես հատկապես ստեղծված էր վաչկատուն տնտեսության համար եւ լիուլի փոխարինում էր նրանց բուն հայրենիք Միջին Ասիան» (էջ 30): Ճշմարտացի է վաչկատունի եւ նստակյացի սույն հակադրությունն ընդունել որպես հիմք հայի եւ թուրքի միջեւ մշտապես առկա անհանդուրժողականության ու լարվածության հարատեւ ընթացքի համար:

Մահմեդականացման ալիքը ծանր ավերներ գործեց Շաքի-Շիրվան գոտում նաեւ հետագա դարերում: Արդեն ԺԸ. դարի սկզբներին էականորեն փոխվել էր երկրամասի ժողովրդագրական պատկերը եւ այս տարածաշրջանում իրենց լեզուն ու էթնիկ դիմագիծը պահպանել էին բուն աղվանական էթնիկ միավորների մի մասը (լեզգիները, քրիստոնեություն դավանող ուդիները): Եւ լոկ հայ բնակչության շրջանում էր անխաթար պահպանվել ազգային մշակույթն ու լեզուն:

Սակայն հետագա երկու հարյուրամյակները եւս երկրամասի քրիստոնյա ազգաբնակչության համար մեծագույն փորձությունների, էթնիկ ինքնությունը պահպանելու երկարատեւ ու համառ պայքարի ժամանակաշրջան դարձան:

Երկրորդ գլխում («Բաքվի նահանգի հայության տեղաբաշխումը, բնակավայրերի տեղագրությունն ու շարժընթացը XIX դարի երկրորդ կեսին») գիտական ճշգրիտ փաստագրությամբ եւ սկզբնաղբյուրների համակողմանի քննությամբ ներկայացված է Շամախիի, Գյոքչայի, Բաքվի, Ղուբայի, Ջավաթի եւ Լենքորանի հայկական բնակավայրերի տեղագրությունը, աշխարհագրական դիրքը, բնակչությանը բնորոշ զբաղմունքները, ճանապարհների վիճակը, բնակչության թվի եւ էթնոդավանական կազմի ընդհանուր պատկերը: Վերոնշյալից ակներեւ է դառնում, որ Բաքվի նահանգում ամենախիտ բնակեցված են եղել Լենքորանի եւ Ղուբայի հարթավայրերը, իսկ ամենանոսրը՝ Ջավաթի գավառը: Իսկ ըստ

տեղաբաշխվածության՝ հայերը հիմնականում կենտրոնացած էին Բաքու քաղաքում, Գյոքչայի, Շամախիի, մասամբ նաև Ղուբայի գավառներում, թաթերը՝ Բաքվի, Ղուբայի, Շամախիի եւ մասամբ՝ Լենքորանի գավառներում, ռուսները՝ Շամախիի, Բաքվի, մասամբ՝ Լենքորանի, Ջավաթի, Ղուբայի եւ Գյոքչայի գավառներում, թալիշները՝ նահանգի հարավային մասում (Լենքորանի գավառ), հրեաները՝ Ղուբայի, Շամախիի, Բաքվի, Գյոքչայի, մասամբ՝ Լենքորանի գավառներում, վրացիները կենտրոնացած էին Բաքու քաղաքում, մասամբ՝ Ջավաթի, Գյոքչայի, Ղուբայի, Շամախիի եւ Լենքորանի գավառներում: Իսկ լեզգիական խմբի լեզուներով խոսող ժողովուրդները հիմնականում կենտրոնացած էին նահանգի հյուսիսային հատվածում՝ Ղուբայի գավառում, մասամբ նաեւ՝ Գյոքչայի, Բաքվի եւ Ջավաթի գավառներում:

Նշված ժողովուրդներից բացի, նահանգում բնակվել են նաեւ փոքրաթիվ էթնիկ խմբեր՝ օսեր, գնչուներ, ինգուշներ, չեչեններ, արաբներ, չերքեզներ, քրդեր, հույներ եւ այլն:

1897 թ. մարդահամարի տվյալներով Բաքվի նահանգում ապրում էին 52 էթնիկ հանրություններ եւ խմբեր:

Ըստ աշխատության հեղինակի՝ Բաքվի նահանգի ժողովրդագրական ընդհանուր հիմնահարցերի ուսումնասիրության տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում լեզգիական խմբի լեզուներով խոսող պատմական Աղվանքի բնիկ ժողովուրդների անմիջական հետնորդները՝ լեզգիները, ուդիները, աղուլները, հափութլիները, ջեկերը, բուդուղները, խինալուղները, կրիզները, ծախուրները, թաբասարանները եւ ռութուլները (էջ 161):

1897 թ. մարդահամարի տվյալներով արդեն ԺԹ. դարավերջին Բաքվի նահանգի էթնովիճակագրական պատկերում ամենահոծ զանգվածը թուրք-թաթարներն էին, քանզի ռուսական պետական վիճակագրությունը նրանց անվան դիմաց աղյուսակի սյունակներում նշել է նաեւ թուրքական լեզվաընտանիքի տարբեր խմբերի մեջ մտնող մահմեդական այլ հանրույթներ՝ ղրղզներ, ջուվաշներ, բաշկիրներ, կումիկներ, թուրքմեններ, թյուրքեր եւ այլն:

Եւ եթե ընդհանրացնելու լինենք այս աշխատության կարեւոր արժանիքները, ապա ամենակարեւորն այն է, որ հիմնավոր կերպով ջախջախիչ հակահարված է տալիս սույն երկրամասը ադրբեջանապատկան համարելու եւ նրա հինավուրց ողջ պատմությունն ու մշակույթը յուրացնելու ազերի պաշտոնական պատմագրության նկրտումներին:

Եւս մեկ կարեւոր դիտարկում. մասնագետները իրավամբ նշում են, որ Գ. Ստեփանյանի սույն աշխատությունը շահեկանորեն տարբերվում է համանման այլ ձեռնարկներից եւ հետազոտություններից ժողովրդագրության ոլորտին առնչվող գիտական բազմապիսի տվյալների աննախադեպ ծավալով եւ անտիպ նյութերի շրջանառմամբ:

Գեւորգ Ստեփանյանի գիտական անդուլ ջանքերով ու համառ պրպտումներով հայագիտությունը հարստացավ եւս մեկ կարեւոր կոթողային աշխատությամբ:

ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու